

(Հ. Յ. Թորոսեան, Վարք, էջ 316): 1719ին, երբ արդէն երկու տարիէ ի վեր իր Միաբանութիւնը ղենետիկ հաստատել ստիպուած էր Երբահայրն, Յովնան Հռոմէն ղենետիկ գնաց, եւ Երբահայր քով ի Ս. Ղազար կը բնակէր իրրեւ հիւր, բայց ծախքերը կը վճարէր եւ Երբահայր որոշած նոր միաբանները կը ձեռնադրէր: Յամին 1720 եկեղեցական խնդրոյ մը համար Հ. Մանուէլ Վ. Հունգարիոյ Կեռլա հայաքաղաքը կ'երթար, Յովնան ընկերացաւ իրեն (Հ. Յ. Թորոսեան, էջ 346) եւ նոյն տարին Սեպտ.ին վերադարձաւ Ս. Ղազար: 1722ին Երբահայր յանձնեց 3000 դահեկան, որպէս զի կենդանութեանն իրեն տրուի տոկոսն, եւ մահունէ ետեւ բարեգործական նպատակի գործածուի: 1723ին տակաւին կը ձեռնադրէր վառքին միաբանները մինչեւ 1727, որմէ ետեւ վրան այլ եւս յիշատակութիւն չկայ իրրեւ ձեռնադրիչ: 1728էն սկսեալ ձեռնադրիչ կը յիշուի Յարութիւն Եպս. Կեսարիոյ Պաղեստինու, որ նոյն միջոցին ղենետիկ հաստատուած էր, առանձնական տուն մը վարձած (տես վերն՝ էջ 135): 1723—27ի միջոցին կ'երեւայ թէ Յովնան Եպս. Հռոմ նստած է, վասն զի 1724ին Միթար Երբահայր Նոյ. 4 թուակիր նամակ մը (խկագիր Դիւան Անտոն.) գրած է անոր ի Հռոմ, եւ կ'իմացընէ որ 100 հատ կազմուած գիրք կը ղըկէ եւ այս գրքերն անտարակոյս Յովնան Եպ. ի Թարգմանութեամբ հրատարա-